Երևան քաղաքի ստորգետնյա անցումների վերակառուցման և արդիականացման ներդրումային նախագիծ

Ծրագրի նկարագիրը

Ծրագրի նպատակն է վերակառուցել և արդիականացնել Երևան քաղաքում առկա ստորգետնյա անցումները՝ միաժամանակ դրանցում առկա առևտրի և սպասարկման ծառայությունների համար նախատեսված տարածքները համապատասխանեցնելով ժամանակակից չափանիշներին: Բարեկարգված և արդիականացված անցումները կապահովեն հետիոտնի անվտանգ տեղաշարժը և տրանսպորտի անարգել աշխատանքը, ինչպես նաև կմեծացնեն քաղաքի գրավչությունը՝ թե՛ բնակիչների, թե՛ քաղաքի հյուրերի համար:

Ստորգետնյա անցումներում կտեղադրվեն էլեկտրական շարժասանդուղքներ, իսկ տարածքը կհարմարեցվի և մատչելի կդարձվի հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժ խմբերի համար: Այստեղ նախատեսվում է իրականացնել երեսպատման, հարդարման, ջրամեկուսացման և լուսավորության արդիականացման աշխատանքներ:

Անցումներում նախատեսվում են՝

- առևտրի կետեր, այդ թվում՝ հագուստի, օծանելիքի և կոսմետիկայի, ոսկերչական զարդերի և աքսեսուարների, էլեկտրոնիկայի խանութներ,
- կենցաղսպասարկման կետեր,
- մանկական խաղասենյակ,
- սրճարաններ և արագ սննդի կետեր,
- ժամանցի և զվարճանքի վայրեր, այդ թվում՝ կինոթատրոն,
- հանրային զուգարաններ:

Տեխնիկական

Երևան քաղաքում հաշվառված է 39 ստորգետնյա անցում, որից 18-ում գործում են առևտրի և սպասարկման կետեր:

ցուցանիշներ

Ծրագրի ժամկետներ	Ծրագրի իրականացման ժամկետը՝ 1 տարի:
Ծրագրի արժեքը	Շինարարական աշխատանքների արժեքը կախված է նախագծային լուծումներից:
Ներդրումների ձևը և հիմնական պայմանները	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել մասնավոր ներդրումների ներգրավմամբ: Երևանի քաղաքապետարանը ներդրողին կաջակցի ծրագրի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ձեռքբերման գործում:
Ներկա իրավիճակ	Առկա են հայեցակարգային նախագծեր: